ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առիթով)

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Դարասկզբի արևմտահայ գրականության, այսպես կոչված, «արվեստագետ սերնդի» ականավոր բանաստեղծներից մեկը Դանիել Վարուժանն է, որի ստեղծագործության մեջ առավել ցայտուն արտահայտություն է գտել պոեզիայի նոր ուղղության գեղարվեստական հարստությունը։

Վարուժանը ծնվել է 1884 թ. Սեբաստիայի գավառի Երգնիկ գյուղում, նահապետական գյուղացու ընտանիքում։ «Դեռ հազիվ ես թիթեռնիկներ որսալու հասակին մեջ,— վերհիշում է Վարուժանը,— հայրս պանդխտած է Պոլիս, և մայրս ձմեռնային երկար երեկոները՝ թոնրատանը նստած՝ երևակայությունս օրորած է ենիչերիներու և գայլերու պատմություններով, երբ Մեյրեզոմի հովը կուկար բուխարիկին մեջ մերթ ոռնալ և մերթ դևի ձագի մը նման լալ»[1]։ Նախնական կրթություն ստանալով տեղի ուսումնարանում, նա 1896 թ. տեղափոխվում է Պոլիս և ուսումը շարունակում հայկական վարժարաններում։ 1902 թ. մեկնում է Վենետիկ և ընդունվում Մխիթարյան միաբանության դպրոցը։ Այստեղ նա ձեռք է բերում համակողմանի գիտելիքներ, խորազնին ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունն ու հայոց գրականությունը, հետաքրքրություն հանդես բերում դեպի վերածնության շրջանի արվեստը, կարդում համաշխարհային գրականության դասականներին, մասնավորապես տարվում Լև Տոլստոյի և Ժան Ժակ Ռուսսոյի գաղափարներով։ «Մուրատ-Ռափայելյանի մեջ է,— խոստովանում է Վարուժանը,— որ ճանչցած եմ հեղափոխության ոգին, կարդալով Ժ. Ժ. Ռուսոն, Թոլսթոն և այլք հազարումեկ դժվարությամբ»[2]։

1905 թ. Վարուժանը տեղափոխվում է Բրյուսել և ընդունվում Գանտի համալսարանը, ուր ուսանում է «քաղաքական ու ընկերական գիտություններ»։ Բելգիայում ապրած տարիներն ու համալսարանական ուսուցումը հսկայական նշանակություն են ունենում նրա աշխարհայացքի ընդլայնման, գաղափարական ու էսթետիկական ըմբռնումների ձևավորման գործում։ Նա մոտիկից դիտում է բուրժուական հասարակության ներքին հակասությունները, ականատես լինում բանվոր դասակարգի հեղափոխական ցույցերին, ոգեշնչվում քաղաքակիրթ աշխարհը համակած սոցիալական-ազատագրական պայքարի հովերով։

1908 թ. Վարուժանը վերադառնում է հայրենիք, զբաղվում մանկավարժական գործունեությամբ՝ գավառի և Պոլսի հայկական դպրոցներում, առաջատար դեր ստանձնում արևմտահայ գրական-հասարակական շարժման մեջ։

---

1 Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 157։

2 Նույն տեղում, էջ 158։

Վրա է հասնում 1915 թ. եղեռնը, և Վարուժանը, ի թիվս այլ մտավորականների, դաժանաբար սպանվում է, երբ ընդամենը երեսունմեկ տարեկան էր։

Վարուժանի բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Սարսուռներ» խորագրով, լույս տեսավ 1906 թ.։ Սկսնակ բանաստեղծի խոհերը տակավին թաթախված են որոնումների ու ինքնահաստատման բաղձանքներով։ «Մուսային» քերթվածում նա դիմում է երգի աստծուն՝ իրեն շնորհելու Աբովյանի, Դուրյանի, Պեշիկթաշլյանի սրտահույզ ու կրակոտ քնարը, որպեսզի հասկանա ազգի ու մարդկության հոգսերը, զգա բնության, սիրո ու կարոտի գեղեցկությունը, իր «շրթունքները կապե ժողովրդի շրթունքին», «մոնչա զարհուրանքները կյանքի» և պատմի «վշտի աղեկեզ սարսուռները»։ «Մոխիրներու առջև», «Վշտին», «Հիվանդ է», «Երազ և խոհ» քերթվածներում բանաստեղծը խորհրդածում է չարի և բարու մասին, կարեկցանք տածում թշվառներին, երկինք առաքում հարցահույզ կանչը, թե «Ե՞րբ պիտի դա մարդկության եղբայրության վսեմ օրը», կամ Ե՞րբ պիտի հուսաթափ լքյալը դտնի «տիեզերական օգնություն»։ «Սարսուռներում» Վարուժանի պոետական մտածողությունը իր վրա տակավին կրում էր ռոմանտիկական վերացականության կնիքը։ Աշխարհի կառուցվածքի, արդարության, չարի, բարու ըմբռնումները ավելի շուտ վերացական դաղափարներ են, քան կյանքի իրական փորձից քաղված ընկալումներ։



Բանաստեղծությունների հաջորդ գրքում՝ «Ցեղին սիրտը» (1909), Վարուժանը հաղթահարում է այդ վերացականությունը և իր քնարը տրամադրում ժողովրդի ազատասիրական ձգտումների արտահայտությանը։ Շարքը բացող «Զոն» քերթվածը բանաստեղծական հավատամքի մի յուրօրինակ հիմն է առ հայրենին, նրա փառքի, կարոտի, արյունոտ վերքի և խոցված սրտի երդն ու պայքարի մարտակոչը.

Ու պայմա՜ր, պայմա՜ր, պայմա՜ր երգեցի.
— Զեզի ընծա՜, հայ մարտիկներ—
Դրիչս եկավ անբրոց սրտերու հնոցի...
— Զեզի ընծա՜, մաչ մարտիկներ—
Եղեգնյա զրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց եկաներ։

Իր քերթվածներում Վարուժանը նկարագրում է արևմտահայ իրականության սարսափները, խորապես վերապրում մարած օջախների, հրկիզվող տր-

ների, մահվան ճիչերի և կթության աղերսների դժոխային սարսուռները։ 1895—1896 թթ. հայկական կոտորածի դեպքերն է նկարագրում «Ջարդը» քերթվածը։ Բանաստեղծը մռայլ տեսարաններ է ներկայացնում և ողբում հայրենի հովիտների ամայացումը.

Իսկ արտերուն, ա՜խ, արտերուն մեջ չճնաղ՝
Ուր հայուն կյանքն արև կ'ըմպե և արևն
Հոգիին մեջ կը մեռնի՝
Վաստակաբեկ դիակներով կը կանգնեն
Հողգոթանե՜ր, Հողգոթանե՜ր սրբազան,
Եվ բոլորն ալ, լի գա՜նգ մ'իրենց ձեռքին մեջ՝
Միահամուռ կը խրմեն
Արյուն ծերի և մանկան,
Արյուն կնոջ, և արյունն
Աբարատին վրա խաչված Հիսուսին։

Վարուժանի բանաստեղծական տեսահորիզոնում համադրվում են էպիկական անցյալն ու ողբերգական ներկան, և փառավոր նախնիների մեծությունը նախատինք է բորբոքում անարժան հետնորդների թուլության հանդեպ («Անիի ավերակներուն մեջ»).

Ո՛վ այպանք, ո՛վ նախատինք,
Ուրեմն ինչո՞ւ ապրիլ, ինչո՞ւ ընդունայն
Հայրենիքի անունն ասանկ մրորնչել,
Երբոր Ողջերը թրմրած
Քեզ չե՛ն ուզեր լրսել, ոստնուլ չե՛ն ուզեր,
Եվ ռազմերգեղ ահաբեկ՝
Ականջներնին ծոցերնուն մեջը դոդած
Երբ զրլխուդ շա՜նք կը մաղթեն,
Ուրեմն ինչա՞ւ, ինչո՞ւ ապրիլ...

Էպիկականի ու ողբերգականի պատմական զուգահեռները այն միտումն ունեն, որպեսզի հաստատեն ազատության բարոյական հավատամքը։ Ներկան ողբերգական է, բայց ապագան անհուսալի չէ։ Բռնությունների ժամանակներն անցնում են, ոտքի են ելնում ժողովուրդները, ամենուրեք ազատության գաղափարի և կռվի երթով է արթնանում մարդկությունը։ Ավերված փլատակների վրա հեղված արյան կաթիլներից կծլեն «վաղվան բողբոջները», և աշխարհը կմաքրվի դարերի տառապանքից։ Ուրեմն պետք է մաքառել բռնության դեմ, պետք է ոչ թե ողբալ, այլ կամք ունենալ նահատակվելու, քանզի ազատությունը շնորհվում է ոչ թե աղոթքով, այլ նվաճվում է սրով ու պայքարով։

Ազատագրական պայքարի գաղափարը Վարուժանի պոետական հայեցության մեջ ելք է որոնում դեպի «հայկական ոգու» փիլիսոփայական հայտնությունը։ Պատմական լայն տեսադաշտի վրա նա քննում է պատճառի ու հետևանքի առեղծվածը և փորձում կռահել հայկական տոհմիկ ոգու սուբստանցիան։ Ներկան հերոսական չէր. բայց նրա էթնիկական ձուլվածքը էպիկական

մեծություն ուներ, ուժի և գեղեցկության պաշտամունք, որով նա իր պատմությունն է տարեգրել մաքառումների ու նահատակության փառավոր դրվագներով։ Ըստ Վարուժանի փիլիսոփայության պետք է նորոգել «հայկական ոգին», պետք է վերադարձնել նրան կամքի հզորության էթնիկական ձուլվածքը։ Եվ այդ որոնումները բանաստեղծին տանում են դեպի հեթանոսական աստվածների ռոմանտիկական մեծարանքը։ Պատահական չէ, որ նա ազատագրական պայքարի իր քերթվածները տեղադրում է «Բագինի վրա» խորագրի տակ։ Քրիստոնեական վանքերի հազարամյա աղոթքները երկնային հույսերով են սնուցել փրկության հավատը։ Այդ աղոթքները սին պատրանք էին միայն, որ բթացրին կամքերը և խլացրին ազատասիրության բնազդը։ Մինչև հիմա ժողովուրդն ունկնդրել է քրիստոնեական վանքերի առաքյալներին, պատգամախոս բանաստեղծը նրա հայացքն ուղղում է դեպի հեթանոսական աղոթավայրը և որպես մի նոր առաքյալ՝ խոսք բացում հին աստվածների հետ («Վահագն»), ունկնդրում հեթանոս Վերածնուհիների պատգամը՝ դյուցազուններ ծնելու, ուժի և ասպետամբության հրով նորոգելու մարդկանց կամքերը, հազարամյակների հեռավորությունից հրավեր կարդում հայրենիքի ոգուն («Հայրենիքի ոգին»)։

Եկո՜ւր, եկո՜ւր.— Եվ Մասիսի կատարեն
Դյուցազներու, վրկաներու հոգիներ,
Իբր աստղերու սերմնացան.
Տեղա՛ բոլոր իգուրյան մեջ մեր երկրին,
Մեր սրտերուն խորունկ խորերը հոսե
Արյունդ անբիծ...

Ազգային ոգու նորոգության կոնցեպցիան փիլիսոփայական ու էսթետիկական ընդհանրացում է գտել «Նեմեսիս» ասրում։ Բանաստեղծը պատկերում է արվեստագետին, որը ձգտում է մարմնավորել իր երազը, ստեղծել այն խորհրդանիշը, որով վեհանում է արվեստագետի կոչումը և լուծվում ճշմարիտ արվեստի հավերժության գաղտնիքը։ Այն օրից, երբ նա «ընկերացավ ժողովրդին արյան հետ», այլևս չէին հրապուրում գարնան ծաղկունքն ու կույսի ժպիտը։ Այնտեղ, ուր «մեռնում է կյանքը», արվեստը պիտի որոնի «անմահ երազը»։ Նա քանդակեց այդ երազը, և հսկա մի ժայռի վրա իր հեթանոս մերկությամբ արձանացավ Նեմեսիսը՝ «Արդարության և վրեժի դիցուհին»։ Սկզբում անհասկանալի ու աննկատ մնաց արվեստագետի սխրանքը, բայց երբ ժողովուրդը հասավ ինքնագիտակցության, նրա մեջ ճանաչեց իր երկրպագության աստծուն.

Դո՛ւ մեզ Աստված, ո՛ւ Տիրամայր, ղե՛հ իջիր
Պատվանդանեդ և ծուլե մեզ կամքիդ մեջ.
Եվ օրենքներդ գրե
Մեր նակատին վրա արյան գրերով։
Քու ժողովուրդդ մե՜նք ենք.
Պիտ՚ ըստանենք մեր աստվածներն հին և նոր
Եվ անյունին վրա անոնց՝
Ատտիկիի մեհյանեդ ալ հոյակապ

Պիտ՝ ու մեհյաներդ կանգնեմ:
Պիտ՝ կործանեմ ապարանքներ ու բանտեր՝
Եվ քառանկյուն սալքարերովն իրենց հաղթ
Պիտ բագի՜ներդ կանգնեմ:

1912 թ. Վարուժանը հրատարակում է բանաստեղծությունների մի նոր շարք՝ «Հեթանոս երգեր» խորագրով: Այս նոր շարքում բանաստեղծը վերջավորում է հեթանոսության իր փիլիսոփայական ու էսթետիկական կոնցեպցիան: Եթե նախորդ քերթվածներում բանաստեղծը հեթանոսական կամքի մեծությունն էր փառաբանում, այդ միտումը հանգեցնելով ազգային-ազատագրական պայքարի գաղափարին, ապա «Հեթանոս երգերում» գտնում է այն մոտիվը, որն ուղեգծում է հայ բանաստեղծության համամարդկային հնչերանգը: «Ցեղին սիրտը» գրքից հետո Վարուժանի գեղագիտական հայացքներում տեղի է ունենում որոշակի բեկում: Ակնարկելով, թե հայ գրականությունը մշտապես գերի է եղել ազգային հոգսերին և դրա պատճառը վերագրելով «հայուն ճակատագրին», Վարուժանը գտնում էր, որ պետք է ստեղծել «հայկական արվեստ մը... համամարդկային գաղափարներու ուղ ու ծուծով» և «ընկերային հարցերի ազատական վերլուծությամբ»: Պետք է փարատել սարսափների մղձավանջը, պետք է հայկական հոգեբանությունն ազատել զենքի ու մահվան հավիտենական նախատինքից և ներարկել այն կյանքի բազմանիստ տարերքներով, սիրո, գեղեցկի, վայելքի զգացողությամբ, ուր հաղթանակում է ազատական ու ներունակ մարդը: «Գեղարվեստը,— գրում է Վարուժանն «Ազգակի» խմբագրությանը,— զենքերու դրվագումով կսկսի: Եվ այդ է միայն մեծ արվեստը. մինչև իր հաղթանակը (որ մարդ էակին հաղթանակն է նաև) այդպես պիտի ըլլա անիկա: Ստրուկ և հերոս հայ ժողովուրդը կրկեսեն դեռ նոր ելած, արյունոտ, քրտնաթոր և տապահեղձ, ամբողջ հոգևին ծարավ է. լույսի կուժը անհրաժեշտ է մոտեցնել իր շրթունքներուն: Կուժ մը, որ մաքուր և ազատաօդ աղբյուրներու մեջ միայն մխրճված ըլլա»[3]:

«Ապրված կյանքի» պոեզիան փիլիսոփայական իր լայն մեկնակետում պատռում է կեցության ազգային ներփակվածությունը և հայտաբերում արվեստի սուբստանցիայի համամարդկային սկիզբը: Միայն այս իմաստով պիտի ըմբռնել իր նամակներից մեկում Վարուժանի արտահայտած, առաջին հայացքից տարակուսանք հարուցող տեսակետը, թե «...սիրահարական սեռը, միակն է գուցե, որ մյուսներեն ավելի ապրելու սահմանված է: Հայրենասիրական քերթվածները օր մը կուգա որ կմեռնին: Եթե սիրահարական քնարերգությունը մշակվի ճշմարիտ տաղանդի ուժով ու այդ քնարին լարերն թաթախված ըլլան ապրված կյանքի մը հույզերուն և մահացված սրտի մը արյունին մեջ, որ կապրի մարդ էակին հետ, դարերու մեջեն կբացատրե կինը՝ այդ մանրանկարը՝ տիեզերքի գեղեցկություններուն»[4]:

Այս տողերը Վարուժանը գրել է այն օրերին, երբ արդեն ձեռնարկել էր «Հեթանոս երգեր» շարքի ստեղծմանը: Թեոդիկին գրած նույն այդ օրերի նա-

3 Նույն տեղում, էջ 168:
4 Նույն տեղում, էջ 172:

մակներից մեկում բանաստեղծը որոշակի է բացահայտում քերթվածների իր նոր շարքի գեղագիտական ու փիլիսոփայական կառուցվածքը. «Հիմա նոր հատոր մը պատրաստելու ձեռնարկած եմ, զուտ ապրված կյանքե, քիչ մը ավելի վերլուծող, ավելի խորիմաստ և հոգեբանական երգերով։ Հայրենասիրականներուս խմորը ավյունովս և զուտ կրակով շաղված եմ. ան՝ ժողովրդին զանգվածին համար եղավ. massa-ին ուզեցի խոսիլ։ Այս պատրաստելիք նոր հատորս կուզեմ որ հոգվույս մտերիմ հույզերը բացատրե. սրտի ծրարումը, ջիղերու կծկումը, ինձի իսկ անծանոթ տրտում վիճակումները, և այն կապարաթույր ձանձրույթը որ, սիրո ժամերուն մեջ, ժամանակը սպաննել ուզելով զայն ավելի կսնուցանե, և այն հուսահատությունը որ իմ գոյությունս իսկ ստեպ ինձի ծաղրելի կդարձնե։ Այս բոլոր հույզերը՝ զոր կերևակայեմ թե ամեն դյուրազգաց մարդ էակ ունեցած պիտի ըլլա, պիտի կազմեն մեկ կարևոր մասը այդ հատորին։ Ա՜հ, ո՜րքան պիտի ուզեի Մարդ էակին գիրքը գրել... Հայրենիքը զմեզ մեր անձեն խիստ հեռացուցած է։ Պետք է մեր սրտին նշխարները՝ որոնք երեք միլիոն ժողովրդին մեջ բաժնված են՝ հավաքել, կեդրոնացնել մեկ կուրծքի տակ, և զգալ իր սեփական Կյանքը, գոնե նվազ ժամանակվան մը համար՝ ի սե՜ր Արվեստին, ի սե՜ր Կյանքի Երգին»[5]։

Տեղին չէր լինի վեճի առարկա դարձնել տրամաբանական այն բացառումները, որ առաջին հայացքից ի հայտ են բերում Վարուժանի ձևակերպումները ազգային-հայրենասիրականի և համամարդկայինի սահմանագծերում, կամ պոեզիայի ոլորտները եզրագծում բնական մարդու իմաննետ ապրումներով։ Էականը հարցի գեղագիտական դրվածքն է, որ ըստ Վարուժանի հանգում է ոչ թե ազգայինին՝ նեղ իմաստով, այլ համամարդկայինին՝ փիլիսոփայական առումով։ Սա գեղագիտական մի մտայնություն էր, որ պարտադրվում էր գրականության նորոգության անհրաժեշտությամբ, որոնելով հայ գրականության համամարդկային մերձեցումների ուղին։

Այս իմաստով հեթանոսական ուղղության գեղագիտական շարժառիթների գիտական իմացությունը թերևս ավելի հիմնավոր բացատրություն է ենթադրում, քան հաճախ ներկայացվում է գրականագիտական հետազոտություններում։ Բոլորովին ինքնատիպ չէ խնդրի այն հասարակացումը, թե հեթանոսական հոսանքը «ակնհայտ քաղաքական, ազատագրական բովանդակություն ուներ» և որպես այդպիսին «արևմտահայ իրականության ծնունդ է» և «արևմտահայ գրականությանը միայն բնորոշ երևույթ»[6]։ Մինչդեռ փաստ է, որ հեթանոսական ուղղությունն իբրև փիլիսոփայական ու էսթետիկական հայեցություն ընդհանուր-համաշխարհային էր և լայն տարածում ուներ եվրոպական գրականության ու փիլիսոփայության մեջ։ Պերճախոս չէ՞ Դ. Վարուժանի մեկնությունը «Հեթանոս երգերի» գրության շարժառիթի վերաբերյալ. «Սակայն, տեսած էի Եվրոպան։ Օգտվելով տեղվույն հսկա գրադարանեն՝ կարդացել էի հնդիկներեն մինչև Հոմեր և Հոմերեն մինչև Մետերլինկ։ Հոգիս վրա բոցի մը լեզվին պես զգացած էի բանվորներուն աղաղակները մեկ կողմեն, ու մյուս կողմեն շվայտ ու արբեցող կյանքը... բարոյիկ համարված փարթամ ընտանիքներուն։ Եվ ահա ասոնք բոլորը՝ ստորագծած հիշողությանս մեջ և միացու-

5 Նույն տեղում, էջ 173։

6 «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 122—124։

ցած հին հունական ու հռոմեական կյանքին վերհիշումներուն, հանգեցա գրել... «Հեթանոս երգերը»[7]։

«Հեթանոս երգերի» տիպարանական համակարգը խարսխված է սիմվոլիզմի և նեոռոմանտիզմի էսթետիկական ու փիլիսոփայական ըմբռնումների վրա։ Մերժելով նատուրալիզմի ու պոզիտիվիզմի սոցիալական դետերմինիզմը և ստեղծագործական չափանիշ ընդունելով արվեստի բացարձակությունն ու բանաստեղծական երևակայությունը, Վարուժանն էապես արտահայտում էր դարաշրջանի մտավորականության ռեակցիան բուրժուական հումանիզմի ճգնաժամի հանդեպ, կամքի մեծության, բնավորության ամրողջականության և հոգու գեղեցկության իդեալը հակադրելով քաղքենիական սահմանափակությանն ու բարոյական տրոհվածությանը։ 1914 թ. հրատարակելով «Նավասարդ» տարեգիրքը, Վարուժանը բացում է այն «Նավասարդյան» քերթվածով, որն արտահայտում է «հեթանոսական ուղղության» գեղագիտական դավանանքը.

Հաննա՛ր Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ՝

Ա՛լ վերածնե՛ փլատակներեն, և փառագոչ
Քնարդ ա՛ռ։

Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մտիր մեհյանն
Աստվածներուն.

Զահը ձեռիդ՝ բազնե բագին համասրփոե՛
Հուր և արյուն։

Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բուժակրդ նուռ,

Հետո գոհվող բերքողներուն սրտին վրա
Լեցո՛ւր, լեցո՛ւր։

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,

Մե՛նք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալույս։

Բարքերի հեթանոսական ազատությունը, որ տնօրինում էին հին աստվածները մերկությամբ, կնոջ մարմնի ընծայաբերմամբ ու առնականությամբ, բնության պաշտամունքի մաքրությամբ էր ցոլված և բարի էր, որովհետև գեղեցիկ էր։ Քաղաքակրթությունը ծածկեց այն «բարոյականի շղարշով» և ինչ բնական էր, դարձրեց պայմանական, որպեսզի քողարկի անբարոյականությունը։ Եվ որպեսզի բացի մարդու ներաշխարհի գեղեցկությունը, բանաստեղծը դիմում է հին, հեթանոսական աշխարհի մտապատկերներին։ Այստեղ

7 Դ. Վարուժան. Նամականի, էջ 207։

ամեն ինչ ներդաշնակ ու գեղեցիկ է, որովհետև բնական է ու տարերային։ Մարդիկ ձուլված էին բնությանը և բնության տարերքի պես աղատ ու աննախապաշար են նրանց զգացմունքներն ու կրքերը. Ուժի, գեղեցկության պաշտամունք կար, հոգու և մարմնի միասնությունը կերպ էր առնում մերկության մեջ և աստվածների հովանավորությամբ մարդիկ տոնախմբում էին, ըմպում գինի և վայելում կյանքը («Վանատուր», «Հեթանոսական», «Ո՜, Տալիթա», «Արևելյան բաղանիք», «Սադուռնական»)։

Հեթանոսական սյուժեի վրա հյուսված մի գեղեցիկ ստեղծագործություն է «Հարբը» ասք-պոեմը։ «Հայոց մեծամեծները» զարնանամուտն էին տոնախմբում Սյունյաց Բակուր իշխանի պալատում։ Ու մինչդեռ խրախճանքն արբենում էր գինով և կրքերն էին շիկանում վարձակների հեզաճկուն մերկությամբ, Տրդատ իշխանը հմայվում է Նազենիկի գեղեցկությամբ ու նրա հայացքի մեջ որսում սիրո ներքին թրթիռը։ Եվ որովհետև աստվածներն են տնօրինել կամքի բնական ազատությունը, իսկ Բակուրը խանդոտ էր իր հարճի հանդեպ, ուստի Տրդատը վճռում է առևանգել Նազենիկին։ Արժանապատիվ իշխանները հետապնդում են նրանց և նետի հարվածով սպանում գեղեցկուհուն։ Տրդատը հորդ արցունքներով լացում է իր կորսված սերը։ Կրքերի ողբերգական բախում է հուշում հեթանոսական այս ավանդույթը, բայց դարերի հեռավորությունից այն հնչում է գեղեցիկ ու բանաստեղծական, որովհետև ամեն բան մաքուր է այնտեղ, բնական ու տարերային, աստվածորեն տնօրինված և մարդկայնորեն ինքնակամ։ Այս կետում էլ Վարուժանը համադրում է ներկան անցյալի հետ, պոեմի էպիկական պատումը ընդմիջում ռոմանտիկ զեղումներով, հեթանոսական կենցաղի պարզությունը հակադրում բուրժուական հասարակության վաճառվող բարոյականությանը.

Փա՜ռք մեծազոր կենցաղին ասպետական դարերուն՝
Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորությունը արբուն
Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցկին, Զորության՝
Փրփուրներու Դիցուհին բստիներներով ոգևնական։

. . . . . .

Փա՜ռք ձեզի միշտ ավարներ, հափափումներ կիներու՝
Որոնք տրվին իրենց տարփն ու համբույրները աղու
Առյուծներու քաջության, և ո՛չ ոսկի հորթերուն
Որոնց սիրտերն առավ լոկ սուրերու ծայրը փաղփուն։
Փա՜ռք ձեզի միշտ, ո՛վ դարեր ասպետական կենցաղին,
Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նրման գիներին։
Առաքինի քաջության տեղ նենգն այս օր կը տիրե...

Հեթանոս աստվածների ռոմանտիկական երազանքը հակաքրիստոնեական ընդվզումի է հանգում «Մեռած աստվածներուն» բերթվածում։ Մեծարելով ուժի և գեղեցկության պաշտամունքի աստվածներին, բանաստեղծը ողբում է նրանց կործանումը և հեգնում հոգով աղքատ, մտքով ստրուկ ներկա մարդկությանը, որ հին աստվածների շնորհներին օտարացած, երկրպագում է խաչին դամված մի անփառունակ աստծու.

Եվ այժմ այդ խաչին տակ,
Որուն թևերը տրտմություն կը ծորեն
Աշխարհիս վրա **բովանդակ,**
Ես պարված, Արվեստիս դառն սրտեն
Կ'ողբամ ձեր մահն, ո՛վ հեթանոս Աստվածներ:
Տեսե՛ք, բոլոր մեր անտառներն ու ծովեր,
Ադբերակներն ու երդիկները խաղաղ
Ամայացա՜ն ու տաղտկացա՜ն: Այժմ, ավա՜ղ,
Մարդն էլ ինկած զարշապարին տակ հրակա
Խուլ Աստուծո մը հրեա:

«Հեթանոս երգերը» հայ պոեզիայի ամենաինքնատիպ ու գեղեցիկ էջերից են: Այստեղ դրսևորվել է Վարուժանի գեղարվեստական մտածողության հարստությունը, վառ երևակայությունն ու ինտելեկտուալ հագեցվածությունը: Բանաստեղծական վառ ու տպավորիչ պատկերների մեջ խայտում են մարդկային հոգու ուժեղ բռնկումները, կենդանացվում հեթանոսական աշխարհի պեյզաժը՝ գույների ու ձևերի պլաստիկ շարժումներով:

«Հեթանոս երգեր» գրքի մեկ բաժինն է կազմում «Գողգոթայի ծաղիկներ» շարքը: Այստեղ արդեն բանաստեղծի հայացքը հեթանոսական դարերի հեռավորությունից հետադարձ է կատարում դեպի ժամանակակից իրականությունը և պատմական ֆորմացիաների զուգահեռներում ի հայտ բերում մարդկության ողբերգությունը: Փոխվում է բանաստեղծության ներքին ու արտաքին կառուցվածքը: Գեղեցիկի, վեհի ռոմանտիկական գույները տեղի են տալիս մռայլ պատկերների անշող ծանրությանը, կյանքի բնական ներդաշնակությունը խզվում է սուր հակասությունների և գոյության տաղտուկի ամենօրյա սարսափներից: Եվ աշխատանքի ու ոսկու, տերերի ու ստրուկների, մահի ու արյան մաքառումների այս քաոսային աշխարհը բանաստեղծին ներկայանում է որպես մի «Նոր Գողգոթա»:

«Գողգոթայի ծաղիկներ» շարքը բացվում է «Աստուծո լացը» բանաստեղծությամբ, որն իբրև բնարան կրում է Ռընանի խոսքերը. «Գեղեցիկ բաները արցուքի մեջ կրծնանին»: Աստված տիեզերական անգոյության մեջ իր տաղտուկը փարատելու համար փորձեց մի երկրորդ էություն ստեղծել, բայց այդ էության արձագանքը եղավ լոկ համր Լռությունն ու կույր Ոչինչը: Հուսահատությունից լաց եղավ աստված և նրա արցունքներից գոյացան երկնքի աստղերը.

Եվ բանաստեղծին նրման Աստված ալ
Որպես զի ստեղծե՝ հարկ եղավ նախ լալ:

Այս բանաստեղծությունն արտահայտում է «Գողգոթայի ծաղիկներ» շարքի էսթետիկական ու գաղափարական միտումը: Ստեղծումի բերկրանքը ծընվում է տառապանքի լացից, ուրեմն մի խորհուրդ ունի նաև մարդկության «Նոր Գողգոթան», որի կսկիծներից երևի պիտի ծնվեն արշալույսի ծաղիկները:

Հաղթանակի գիշերն է այս տոնական.—
Հա՛ռս, եղ լեցուր նրագին:

Պիտի դառնա կոիվեն տրդաս հաղթական.—
Հա՛ռս, ինքը ա՛ռ պատուոյգին:

Սայլ մը կեցավ դրոան առջև, հուրին ետև.—
Հա՛ռս, վառե՛ լույսը նրբագին:

Տրդաս կու գա նակատն հրպարտ դափնիով.—
Հա՛ռս, բե՛ր նրբագը շնմին:

Բայց... սայլին վրա արյո՞ւն և սո՞ւգ բեռցեր են...
Հա՛ռս, նրբագդ ասդի՛ն երկարե:

Հերոս տրդաս հոն զարնվա՞ծ է սրտեն.—
Ա՜խ, հա՛ռս, նրբագդ մարե՞...

Այսպիսին է հայրենական ցավը. հաղթանակի հույսը մարում է մահվան կսկիծով, բայց նահատակ հերոսի արյան կաթիլներից չէ՞, որ պիտի բուսնեն ազատության ծաղիկները: Գողգոթայի սարսուռներով է համակված ամբողջ մարդկությունը: Վարուժանի բանաստեղծական մտապատկերներում մռայլ գույներով է գծագրվում եվրոպական քաղաքը՝ սոցիալական իր ծանր հոգսերով։ «Բանվորուհին», «Ընկեցիկը», «Մեռնող բանվորը», «Մեքենաները», «Դադար» քերթվածներում բանաստեղծը ցնցող գույներով պատկերում է ծխի ու մրի մեջ թաթախված քաղաքների դժոխային կյանքը, զրկված ու հացի կարոտ բանվորի տառապանքը, գործարանների հեղձուցիչ մթնոլորտն ու մեքենաների մաշող ժխորը։ Խորհելով «տիեզերական անարդարությունը», երբ աշխատավորը հարստություն է ստեղծում, բայց մնում է զրկված, իսկ տերերն ու արքաները վայելում են նրանց վաստակը, բանաստեղծը մտովի դեգերում է դեպի անհունները՝ որոնելու «աղբյուրը լույսին»։

Բայց ապագան բանաստեղծին անհուսալի չի թվում։ Աշխատավորների հոծ բանակների, նրանց ջլապինդ ձեռքերի մեջ մի ուժ է թաքնված, որից պիտի սարսափեն բռնության տերերը։ Նա գուշակում է, որ «Մեր դարի հաղթության կամարն այսօր էլ կը հանգչի հարյուր հազար բանվորի ուսերուն վրա» և նրանց քայլվածքի հորձանքը պիտի փորի «դղյակների հիմունքները».

Եվ կը տեսնե՞ս ահոնց մեջ Քաղցին նիվաղն հոգնահեռ՝
Որ հինահույզ կը սողա, կուշտին կը կրե կայծակներ.
Վաղն, ո՛վ Ընկեր, ո՛վ Ընկեր, Քաղքին վրա այս գոռոզ
Պիտի Ամպրոպը նայրի, վառե ջահեր բարբարոս:

Բանաստեղծը փառաբանում է մայիսի մեկը, հրավեր կարդում «տառապյալ հոգիներին»՝ իրենց երթը միացնելու մարդկության հույսերի տոնին («Մայիսի մեկ»)։ Նոր դարն արդեն գուշակում է լուսավոր ապագան։ «Մարդկության միտքն Ընկերավար կու գա բանալ վերջապես իմաստության ոսփինքսին ապառաժե շրթունքներն» և ավետել գրոհի ու ըմբոստացումի երգը։ Աշխարհը բռնկված է մի մեծ պայքարի հրով։ Շարժվում է արևելքը, ազատության հրաբուխ է ժայթքում Եվրոպան, «ռուսական մարդերուն վրա կորոտան հրավեր-

ները կովին և խոստումներն երադին», ամենուրեք «կը խորտակեն շղթաներ», և այդ ահեղ ցնցումներից՝

Պիտի աշխարհը ելլե նորոգվա՞ծ ու գեղեցի՞կ
Եվ պիտ՝ ըլլա արժանի Արևին շուրջ դառնալուն...
Ո՛վ Դար, ո՛վ Դար հուսագեղ, դու Մարդկությա՞ն Առավոտ...

«Հեթանոս երգերից» հետո Վարուժանը ստեղծեց գյուղական մոտիվների մի ամբողջ շարք, որը լույս տեսավ բանաստեղծի մահից հետո՝ «Հացին երգը» խորագրով։ Հետաքրքրությունը դեպի գյուղական իրականությունը չէր թելադրված ո՛չ ռոմանտիկական փախուստով և ո՛չ էլ հոգու խռովքը հովվերգական անդորրում փարատելու միտումով։ Ժողովրդի հավերժության փիլիսոփայությունը՝ ահա Վարուժանի գեղագիտական կոնցեպցիան։ Սա էլ պայմանավորել է բանաստեղծական պատկերի էպիկական կառույցը, իրականության ընկալման էսթետիկական սկզբունքը։ Այդ իրականությունը չի ցուցադրում ո՛չ սոցիալական ներքին հակասությունները և ո՛չ էլ կրքերի դրամատիկ բախումներ։ Դա մի ամբողջական աշխարհ է՝ ժողովրդական կյանքի էպիկական տարերքով։ Ռեալիստորեն բնական և ռոմանտիկորեն գեղեցկացված պատկերներում բանաստեղծը նկարագրում է գեղջկական կյանքի առօրյան, պոետականացնում աշխատանքն ու վաստակը, բերքն ու բարիքը։ Վարուժանը ի հայտ է բերում գյուղական պեյզաժի նուրբ և խոր զգացողություն։ Նա ստեղծում է հեքիաթային մի աշխարհ, ուր բնությունը գեղեցկությամբ է թարմացնում կյանքը, արևը ջերմացնում է սրտերը, լուսինը երազներ է օրորում և գեղջուկն ունկնդրելով բնության հրաշքին, ստեղծում է կյանքի հրաշքը՝ վար ու ցանքը, հունձն ու կալը, հյուսում երգի ու աշխատանքի սիմֆոնիան։

Հովե՞ր կ'անցնին.—

Ու ցորյաններս հուշիկ հուշիկ կ'արբրնան
Իրենց խորքեն կը հոսի դող մ'անսահման
Գեղադալար կոդերն ի վար բրլուրին

Ծովե՞ր կ'անցնին։
Հովե՞ր կ'անցնին.—

Քիստերուն տակ կ'ալեծրփին եղիներ՝
Ուր լուսնակն իր սափորին կաթն է հոսեր։
Կալերեն գյուղ, գյուղեն մինչև ադորին

Ծովե՞ր կ'անցնին։
Հովե՞ր կ'անցնին.—

Զրմուխաներով կը ծրվա դաշտը անհուն։
Միտը կ'երգե բառած հասկի մ'օրորուն՝
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին

Ծովե՞ր կ'անցնին,
Հովե՞ր կ'անցնին։

Բացվում է առաջին ծիլը, շաղում է գարնան անձրևը, պտղավորվում է արտը, և գեղջուկը երջանկությամբ է ցողում բնության շռայլ պարգևը։ Արևը ոսկի է տեղում, ոսկի է ներկվում հասկը, հասած ցորենը օրորվում է հովի սոսափից և ավետում հունձքը։ Գեղջուկը գերանդին է սրում, սայլերին բարձած խուրձը ժպտում է արևին, կալերում կամներգն է աշխուժանում և ցորենն է համբուրում արշալույսի շողը։ Եվ երբ կյանքի այդ գեղեցիկ պոեմն է ավարտվում, բանաստեղծը օրհներգ է մաղթում աշխարհին՝ խաղաղության, բերրիության, ծիլ ու ծաղկի, առատության, բերկրության, պտղաբերումի և սիրերգության մաղթանքը («Անդաստան»).

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՜ւն թող ըլլա...
Ո՛չ աչյուններեր, մրտինմ հոսին
Լայն երակին մեջ ակասին.
Ու երբ հընչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությո՜ւն թող ըլլա։

. . . . . .

Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերում թող ըլլա...
Ծաղկի՜ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՜ւն թող ըլլա։

«Հացին երգը» շարքի գեղարվեստական առանձնահատկություններից մեկը ժողովրդական մոտիվների ոճական երանգավորումն է։ Վարուժանն օգտագործել է աշխատանքի, սիրո ժողովրդական երգերի պարզ, անպաճույճ արտահայտչաձևերը, որոնք նրա քերթվածներին տալիս են ներքին հուզականություն և երաժշտականություն։ Այս տեսակետից հատկապես ուշագրավ են «Առաջին ծիլեր», «Ցորյանի ծովեր», «Հասուն արտ», «Հունձք կը ժողվեմ», «Կամներգ», «Երնում» բանաստեղծությունները, որոնց ռիթմն ու պատկերային համակարգը կառուցված է ժողովրդական մոտիվների պոետիկական սկզբունքներով։

Հունձ՛ կը ժողվեմ մանգաղով,
— Լուսնակը յարս է—
Ակոս ակոս ման գալով։
— Սիրածրս հարս է։
Գրլխարաց եմ ու բոբիկ,
— Անո՜ւշ են հովեր—
Արտերուն մեջ թափառիկ։
— Ինչե՜ր են ծովեր...

Վարուժանի ստեղծագործության մեջ արտացոլվել են դարասկզբի հայ քնարերգության գեղարվեստական որոնումները։ Լինելով կրթված ու համակողմանիորեն զարգացած անհատականություն և խորապես տիրապետելով համաշխարհային պոեզիայի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև

նորագույն շրջանը, նա ազգային քնարերգության ավանդների վրա պատվաստեց համաշխարհային պոեզիայի գեղարվեստական հարստությունը և կատարելագործեց հայ բանաստեղծության պոետիկական համակարգը։ «Երկու միջավայր ազդած են վրաս,— գրել է Վարուժանը,— Վենետիկը իր Թիցիանով և Ֆլանտրը իր Վան-Տեգներով։ Առաջինին գույները և վերջնույն բարբարոս իրապաշտությունը հորինած են վրձինս՝ զոր սնափառությունն ունիմ թաթխած ըլլալու միմիայն հայրենի հողին որդան կարմիրին մեջ և ծովածուփ արյանը»[8]։

Վարուժանի արվեստը հատկանշվում է ոճական սկզբունքների մի բարդ համադրությամբ։ Նա գիտական ստուգության ենթարկեց բանաստեղծության պոետիկական համակարգը, սահմանեց բառի ու հասկացության ճշգրտությունը, ձևի ներդաշնակությունն ու կառուցվածքի ամբողջականությունը։ Վարուժանի բանաստեղծական մտածողությունը ելնում է սինկրետիկ արվեստի ըմբռնումից։ Ընդունելով, որ «իրապաշտությունը գեղեցկության հասնելու ամենեն ուղիղ դիծն է» և գրական մյուս դպրոցները դիտելով որպես ռեալիզմի ուրույն դրսևորումներ, նա նախընտրում էր ոճական այն ունիվերսալիզմը, որն ընդունակ է արտահայտելու կյանքի անսահման կապերի բազմազանությունն ու հարստությունը։ «Բնությունը,— գրում է նա,— իր խորհրդավորությունները ունի, իր անսանձ մրրիկները ունի, կամ իր միջօրեի արևուն միակտուր խաղաղությունը. ասոնք փոխնիփոխ նկարելով ինչպես որ են, ի՛նչպես որ մեր հոգիին վրա փոխնիփոխ կցոլան, մենք փոխնիփոխ կըլլանք խորհրդապաշտ, ռոմանդիկ, դասական. հետևաբար գեղեցկությունը անթերի արտադրելու համար ես պիտի սիրեի տալ այս բոլորը միանգամայն, բնությունը ինչ-որ է և ինչպես որ է, մեկ քերթվածի, մեկ տունի, նույնիսկ մեկ տողի մեջ, մերթ ըլլալով, միևնույն անգամ, դասական և խորհրդապաշտ, ռոմանդիկ և գաղափարապաշտ»[9]։

Այս բնորոշումն ավելի քան ճիշտ է բնութագրում Վարուժանի պոեզիայի գեղարվեստական կառուցվածքը։ Նա հիրավի, ստեղծեց բանաստեղծական մի ինքնատիպ ու կատարյալ համակարգություն, համադրելով ռոմանտիզմի, դասականության և սիմվոլիզմի պոետիկական սկզբունքները։

ДАНИЭЛ ВАРУЖАН

(К 90-летию со дня рождения)

Доктор филол. наук С. Н. САРИНЯН

(Резюме)

Даниэл Варужан (1884—1915)—один из крупнейших представителей армянской лирики начала XX в. Философская направленность в его творчестве сочетается с эстетической и психологической глубиной в постижении и осмыслении мира. Он создал подлинно художественные ценности, составившие одну из самых блистательных страниц армянской поэзии. Поэтическое наследие Варужана состоит из четырех циклов: «Содрогания» (1906), «Сердце народа» (1909), «Языческие песни» (1912), «Песня хлеба» (1922).

8 Դ. Վարուժան, Նամակներ, էջ 158։

9 Նույն տեղում, էջ 177։

Отражая тяжелые страдания армянского народа, Варужан в то же время ввел в сферу своих поэтических раздумий судьбу всего человечества. Отвергая иррационализм буржуазного гуманизма, он находил идеал силы, красоты и свободолюбия в естественности и нетронутости народного быта и романтической экзотике нравов эпохи язычества, противопоставляя этот мир безнравственности и мещанской ограниченности «нового общества».

В творчестве Варужана со всей яркостью отразились художественные веяния поэзии начала XX в. Он приблизил армянскую лирику к художественным критериям мировой поэзии.